040.1217.170805

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"17" օգոստոսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2005 թվականի N 1217-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ (ՄԵՂՐԻ) ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրոպական միության եւ նրան ոչ անդամ երկրների (պետությունների) միջեւ կենդանական ծագման սննդամթերքի (մեղրի) առեւտուրը կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետությունից կենդանական ծագման սննդամթերքի (մեղրի) արտահանման հետ կապված գործառույթները կարգավորող պետական մարմնի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:
2. Միջազգային ԻՍՕ-ի ստանդարտով հավաստագրված Հայաստանի Հանրապետության դեղորայքների եւ բժշկական տեխնոլոգիաների գործակալության փորձագիտական լաբորատորիայի (ԷՔՍԼԱԲ) եւ Երեւանի պետական համալսարանի սննդամթերքի կենսաբանական հսկողության լաբորատորիայի (ՖՈՒԴԼԱԲ) միջոցով իրականացնել կենդանական ծագման սննդամթերքի (մեղրի) որակական ցուցանիշների հետազոտական եւ ստուգման աշխատանքները:
3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝

ա) եռամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ սույն որոշման 2-րդ կետում նշված լաբորատորիաները ժամանակակից չափիչ եւ հսկիչ սարքավորումներով համալրելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կենդանական ծագման սննդամթերքի (մեղրի) սերտիֆիկացման համար անհրաժեշտ դրամաշնորհային կամ վարկային ֆինանսական միջոցներ ձեռք բերելու վերաբերյալ.

բ) մշակել Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ կենդանական ծագման սննդամթերքի (մեղրի) ներմուծմանն ուղղված գործողությունների ժամանակացույց:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՆ